Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի
2026թ. մայիսի 22-ի թիվ 10 նիստում
Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան
«22».05.2026թ.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2026-2030ԹԹ. ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

I. Ընդհանուր դրույթներ

1.Գավառի պետական համալսարանի (ԳՊՀ, Համալսարան) միջազգայնացման ռազմավարական ծրագիրը (այսուհետ՝ նաև Ծրագիր) հիմնված է ՀՀ բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող օրենսդրության, Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի սկզբունքների, Համալսարանի կանոնադրության, ԳՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի վրա:
2. Ծրագիրը նպատակ ունի սահմանել Համալսարանի գործունեության առանցքային ուղղություններով՝ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի, գիտահետազոտական աշխատանքների իրականացման, դասավանդման, ուսումնառության և կառավարման ոլորտներում միջազգայնացման հիմնարար դրույթներն ու կառուցակարգերը:
3. Սույն ռազմավարական ծրագիրը մշակվել է Գավառի պետական համալսարանի միջազգայնացման գործընթացների արդյունավետության ապահովման, արտաքին համագործակցության ընդլայնման, Համալսարանի մրցունակության և միջազգային ճանաչելիության բարձրացման նպատակներով:

II. ԳՊՀ միջազգայնացման ուղղությունները

4. ԳՊՀ միջազգայնացման հիմնական ուղղություններն են.
1/տարբեր պետությունների առաջատար համալսարանների հետ համագործակցության ծրագրերի իրականացում,
2/ ուսուցման, ուսումնառության և հետազոտության ոլորտներում արտերկրի բուհերի հաջողված փորձի ուսումնասիրում և տեղայնացում,
3/ ակադեմիական փոխանակման ծրագրերի կենսագործում, սովորողների և դասախոսների միջազգային շարժունության ապահովում,
4/գիտահետազոտական գործունեության ոլորտում միջազգային համագործակցության զարգացում,
5/ օտարալեզու (երկլեզու) կրթական միջավայրի ձևավորում,
6/ թվային կրթական գործիքների և միջազգային առցանց համագործակցության զարգացում,
7/ միջազգային գործընկերության ուղեծրի շարունակական ընդլայնում,
8/ համալսարանի միջազգային հեղինակության և տեսանելիության բարձրացում:

III. ԳՊՀ միջազգայնացման նպատակներն ու խնդիրները

5. Համալսարանի միջազգայնացման նպատակով ԳՊՀ-ն սահմանել է հետևյալ ռազմավարական նպատակները.

1/ ուսանողների, պրոֆեսորադասախոսական կազմի անդամների միջազգային ակադեմիական շարժունության խրախուսում,

2/գիտահետազոտական գործունեության ոլորտում միջազգային համագործակցության խթանում և միջազգային մակարդակում գիտահետազոտական գործունեության խրախուսում,

3/ երկլեզու կրթական, գիտահետազոտական միջավայրի ձևավորում,

4/ ուսանողների և դասավանդողների՝ եվրոպական գործընկեր բուհերի կրթական միջավայրում ուսումնառության որոշակի հատված անցկացնելու և դասավանդելու, վերապատրաստվելու հնարավորության ապահովում,

5/ թվային գործիքների կիրառմամբ միջազգայնացման խթանում,

6/ Համալսարանի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի միջմշակութային իրազեկվածության ապահովում,

7/ Համալսարանի միջազգային ճանաչելիության բարձրացում:

6. ***Նպատակ 1. Ուսանողների, պրոֆեսորադասախոսական կազմի անդամների միջազգային ակադեմիական շարժունության խրախուսում:***

Խնդիրները.

1/ Համալսարանում համագործակցությունը խթանող մշակույթի ստեղծում հյուրընկալվող միջազգային ուսանողներին և գործընկերներին գրավիչ ակադեմիական միջավայր ապահովելու նպատակով, ինչպես նաև արդեն գոյություն ունեցող համագործակցային հարաբերությունների և ենթակառուցվածքների ամրապնդում՝ ակադեմիական փոխանակում ապահովելու նպատակով,

2/ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի անդամների միջազգային ակադեմիական շարժունության խրախուսում,

3/ միջազգային ուսանողներին և պրոֆեսորադասախոսական համակազմին անհրաժեշտ աջակցության և խորհրդատվության տրամադրում,

4/արտերկրում ուսումնառությունը շարունակել պատրաստվող ուսանողներին, ինպես նաև դասավանդել պատրաստվող դասախոսներին անհրաժեշտ ակադեմիական խորհրդատվության և տեղեկատվության տրամադրում,

5/արտերկրի առաջատար բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ համագործակցության հաստատում,

6/ակադեմիական փոխանակման պայմանագրերում ամրագրված ոլորտների/ մասնագիտությունների ընդլայնում,

7/ արտերկրի գործընկեր բուհերի հետ համատեղ և կրկնակի աստիճանաշնորհմամբ կրթական ծրագրերի իրականացում,

8/անգլերենով ուսուցանվող նոր մասնագիտական կրթական ծրագրերի մշակում,

9/ արտերկրի գործընկեր բուհերի հետ ամառային դպրոցների, վարպետության դասերի և այլ կարճաժամկետ ծրագրերի շարունակական իրականացում:

7.***Նպատակ 2. Միջազգային գիտահետազոտության ոլորտում համագործակցության խթանում և միջազգային մակարդակում գիտահետազոտական գործունեության խրախուսում:***

Խնդիրները.

1/ միջազգային գիտահետազոտության ոլորտում համագործակցության խթանում և միջազգային մակարդակում գիտահետազոտական գործունեության խրախուսում,

2/ գիտահետազոտական բնույթի նախագծերի իրականացում և միջազգային հետազոտության ոլորտում համագործակցության պայմանագրերի կնքում,

3/ միջազգային հետազոտական բաղադրիչ ունեցող /մագիստրոսական, դոկտորական/ ծրագրերին դիմելու խրախուսում և անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում,

4/ հետազոտական բնույթի համատեղ օտարալեզու աշխատությունների պատրաստում և տպագրում,

5/ համապատասխան ոլորտի դասախոսների/մենթորների հրավիրում,

6/ եվրոպական բարձրագույն կրթական և գիտական տարածքում պահանջարկ ունեցող ծրագրերի իրականացում,

7/ միջազգային գիտաժողովներին ուսանողների և դասախոսների մասնակցության խրախուսում,

8/ երիտասարդ հետազոտողների համար նախատեսված ամառային դպրոցներին մասնակցության ապահովում:

8. ***Նպատակ 3. Օտարալեզու (երկլեզու) կրթական ու գիտահետազոտական միջավայրի ստեղծում և ընդլայնում:***

Խնդիրները.

1/ համապատասխան ստորաբաժանումների /Արտաքին կապերի և լրատվության բաժին, Օտար լեզուների և գրականության ամբիոն/ կողմից պաշտոնական ծանուցումների, պայմանագրերի, ակադեմիական առաջադիմության թերթիկների, տեղեկատվական նյութերի, պաշտոնական կայքէջերում տեղադրված տեղեկատվության, օգտատերերին անհրաժեշտ տեղեկատվության անգլերեն թարգմանության ապահովում,

2/ ակադեմիական անգլերենի զարգացման, միջազգային գիտաչափական հարթակներին անդամակցության վերաբերյալ լրացական դասընթացների և վերապատրաստումների իրականացում,

3/ անգլերենի՝ որպես ‹‹կորպորատիվ լեզվի›› տարածման խրախուսում՝ Համալսարանի ներսում բարձրագույն կրթությանն առնչվող տերմինաբանության կիրառումը ապահովելու նպատակով,

4/ անգլերենով դասավանդվող առարկաների, մասնագիտական կրթական ծրագրերի ավելացում:

9. ***Նպատակ 4. Ուսանողների և դասախոսների՝ Եվրոպայի մի շարք առաջատար բուհերի կրթական միջավայրում ուսումնառության որոշակի հատված անցկացնելու և դասավանդելու/վերապատրաստվելու հնարավորության ապահովում:***

Խնդիրները.

1/ արտերկիր մեկնել պատրաստվող և ԳՊՀ ժամանող ուսանողների համար մենթորային խորհրդատվական ծրագրի ստեղծում,

2/ ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի անդամների համար օտար լեզվի դասընթացների շարունակական կազմակերպում,

3/ ներքին մշտադիտարկման համակարգի ստեղծում, որը հնարավորություն կտա չափել և գնահատել միջազգային ծրագրերին մասնակցած ուսանողների և դասավանդողների՝ տվյալ ժամանակահատվածի գործունեության արդյունավետությունը՝ հետագայում թերությունների շտկման և մարտահրավերների հաղթահարման նպատակով:

Նպատակ 5/ Թվային միջազգայնացման խթանում:

Խնդիրները.

1/ միջազգային կրթական համագործակցության շրջանակներում առցանց և համակցված (զուգակցված) ձևաչափերով դասընթացների, վերապատրաստումների, սեմինարների և համատեղ կրթական ծրագրերի իրականացում՝ ապահովելով ուսանողների և դասախոսների ներգրավվածությունը եվրոպական կրթական և միջավայրին,

2/ կրթական գործընթացում ժամանակակից թվային ուսուցման և համագործակցության հարթակների (Moodle, Microsoft Teams, Zoom, Miro, Google Classroom և այլն) կիրառության ընդլայնում՝ ուսումնառության արդյունավետության և միջազգային հաղորդակցության զարգացման նպատակով,

3/ վիրտուալ ակադեմիական շարժունության ծրագրերի խթանում՝ հնարավորություն ընձեռելով ուսանողներին և դասախոսներին մասնակցելու արտասահմանյան բուհերի առցանց դասընթացներին, համատեղ նախագծերին, հետազոտական աշխատանքներին և ակադեմիական քննարկումներին՝ առցանց ձևաչափով,

4/ միջազգային կրթական հարթակներում Համալսարանի թվային ներկայացուցչության ապահովում՝ պաշտոնական կայքի, սոցիալական հարթակների և թվային տեղեկատվական ռեսուրսների բազմալեզու բովանդակության ընդլայնման, միջազգային լսարանի համար մատչելիության բարձրացման և համալսարանի միջազգային ճանաչելիության ամրապնդման նպատակով,

5/ միջազգային թվային կրթական ռեսուրսների և էլեկտրոնային գրադարանների հասանելիության ապահովում՝ կրթության և գիտահետազոտական գործունեության որակի բարձրացման նպատակով,

6/ պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի անդամների թվային կարողությունների շարունակական զարգացում՝ միջազգային թվային կրթական միջավայրում արդյունավետ գործունեություն իրականացնելու նպատակով,

7/ միջազգային համագործակցության շրջանակներում Համալսարանում թվային անվտանգության, ակադեմիական բարեվարքության և տվյալների պաշտպանության ժամանակակից կառուցակարգերի ներդրում և կիրառում:

10. ***Նպատակ 6. Համալսարանի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի անդամների միջմշակութային իրազեկվածության բարձրացում:***

Խնդիրները.

1/ Համալսարանի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի անդամների՝ օտար լեզվի դասընթացներին մասնակցելու

հնարավորությունների ապահովում և խրախուսում, նրանց համար միջմշակութային իրազեկվածության բարձրացման վերապատրաստումների կազմակերպում,

2/ անձնակազմի անդամների՝ ակադեմիական փոխանակման և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանն ուղղված միջազգային ծրագրերին մասնակցության խրախուսում,

3/ գործընկեր արտասահմանյան բուհերի արտաքին կապերի կամ միջազգային համագործակցության բաժինների փորձի ուսումնասիրում, համադրում և տեղայնացում, նրանց հետ համագործակցության ծրագրերի արդյունավետ իրականացում:

Նպատակ 7. Համալսարանի միջազգային ճանաչելիության բարձրացում: Խնդիրները.

1/ Համալսարանի միջազգային մարքեթինգային ռազմավարության մշակում և իրականացում՝ ուղղված ԳՊՀ-ի կրթական, գիտահետազոտական և մշակութային ներուժի ներկայացմանը միջազգային ակադեմիական հարթակներում և գործընկերային ցանցերում,

2/ միջազգային կրթական ցուցահանդեսներին, ակադեմիական ֆորումներին, գիտաժողովներին և բարձրագույն կրթության ոլորտի միջազգային միջոցառումներին Համալսարանի մասնակցության ապահովում և ներկայացվածության ակտիվացում՝ միջազգային համագործակցության հնարավորությունների ընդլայնման նպատակով,

3/ Համալսարանի պաշտոնական կայքի, սոցիալական մեդիայի հարթակների և թվային տեղեկատվական ռեսուրսների արդիականացում, բազմալեզու բովանդակության ընդլայնում և միջազգային լսարանի համար տեղեկատվության մատչելիության բարձրացում,

4/ օտարերկրյա ուսանողների ներգրավման կառուցակարգերի կատարելագործում՝ միջազգային դիմորդների համար տեղեկատվական, ակադեմիական և խորհրդատվական աջակցության համակարգերի զարգացմամբ,

5/ Համալսարանի միջազգային ներկայացվածության (բրենդավորման) քաղաքականության իրականացում՝ ԳՊՀ-ի ճանաչելիության և մրցունակության բարձրացման նպատակով,

6/ միջազգային վարկանիշային համակարգերում և ակադեմիական ցանցերում Համալսարանի մասնակցության խթանում, համապատասխան չափանիշների ուսումնասիրություն և դրանց աստիճանական ներդրում,

7/արտասահմանյան գործընկեր համալսարանների, միջազգային կազմակերպությունների և դիվանագիտական կառույցների հետ համագործակցության ընդլայնում՝ համատեղ կրթական, գիտական և մշակութային նախաձեռնությունների իրականացման նպատակով,

8/ համալսարանի միջազգային հաջողությունների, գիտական ձեռքբերումների, շարժունության ծրագրերի և միջազգային նախագծերի արդյունքների պարբերական լուսաբանում տեղական և միջազգային տեղեկատվական հարթակներում:

IV. ԳՊՀ միջազգայնացման միջոցներն ու կառուցակարգերը

11. Համալսարանի մասնագիտական կրթական ծրագրերի միջազգայնացման միջոցներն ու կառուցակարգերն են.

1/ Համալսարանում օտարալեզու մասնագիտական կրթական ծրագրերի ավելացում և դրանց իրականացման համար անհրաժեշտ պայմանների ապահովում,

2/ օտարալեզու լրացուցիչ կրթական ծրագրերի և դասընթացների մշակում ու իրականացում,

3/ օտարերկրացի ուսանողների ներգրավում,

4/ առցանց՝ հեռավար դասընթացների, լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացում,

5/ ԳՊՀ դասախոսների, ուսանողների և ուսումնաօժանդակ կազմի անդամների՝ օտար լեզուների տիրապետման մակարդակի բարձրացում, միջմշակութային հաղորդակցության կարողությունների զարգացում,

6/ արտասահմանյան գործընկեր բուհերի հետ համատեղ և կրկնակի աստիճանավորմամբ կրթական ծրագրերի իրականացում,

7/ ԳՊՀ ուսանողների միջազգային շարժունության խրախուսում,

8/ մարքեթինգային համալիր քաղաքականության վարում, արդյունավետ գործողությունների (տեսահոլովակներ, ցուցահանդեսներ, համաժողովներ, գովազդ և այլն) իրականացում, համացանցային հնարավորությունների և ծրագրերի արդյունավետ օգտագործում:

12. Համալսարանի գիտահետազոտական ծրագրերի միջազգայնացման միջոցներն ու կառուցակարգերն են.

1/ ԳՊՀ և գործընկեր արտասահմանյան բուհերի դասախոսների և ուսանողների համատեղ գիտահետազոտական գործունեության խրախուսում,

2/ միջազգային գիտաժողովների կազմակերպում և դրանց աշխատանքներին ԳՊՀ դասախոսների և ուսանողների մասնակցության ակտիվացում,

3/ միջազգային համարում ունեցող գիտական պարբերականներում տպագրությունների ավելացում,

4/ միջազգային հայտնի հրատարակությունների ձեռքբերում, էլեկտրոնային գիտական ռեսուրսների հասանելիության ապահովում,

5/արտասահմանյան հետազոտական և փորձագիտական աշխատանքների արդյունքների ուսումնասիրում, քննարկում և տեղայնացում, ներառում կրթական գործընթացում,

6/ դասախոսների միջազգային ակադեմիական փոխանակմանը, նորարարական գաղափարների շրջանառությանը նպաստում,

7/ երկլեզու կրթական, գիտահետազոտական միջավայրի ձևավորում:

13. Համալսարանի կառավարման ոլորտի միջազգայնացման միջոցներն ու կառուցակարգերն են.

1/ գործընկեր առաջատար բուհերի կառավարման համակարգի ուսումնասիրում, համադրում և հաջողված փորձի տեղայնացում,

2/ կառավարման ժամանակակից գործիքների ներդնում,

3/ բուհական ժողովրդավարության ամրապնդում և մասնակցային կառավարման կառուցակարգերի արդյունավետ կիրառում,

4/ ՀՀ և արտասահմանյան բուհերի հետ համագործակցության հուշագրերի կնքում և դրանց հիման վրա գործընկերային հարաբերությունների ակտիվացում,

5/ԳՊՀ վարչական աշխատակազմի կարողությունների զարգացում, արտասահմանյան գործընկեր բուհերում վերապատրաստումների կազմակերպում,

6/ ԳՊՀ-ի՝ որպես վստահելի գործընկերոջ համբավի ամրապնդում:

V. Արդյունավետության գնահատման ցուցանիշներ

14. Ռազմավարության արդյունավետության գնահատման համար սահմանվում են հետևյալ հիմնական ցուցանիշները՝

1/ միջազգային համագործակցության պայմանագրերի քանակ,

2/ միջազգային ակադեմիական շարժունության ծրագրերին մասնակցած ուսանողների և դասախոսների թիվ,

3/ միջազգային գիտական հրապարակումների քանակ,

4/ օտարերկրյա ուսանողների և դասախոսների ներգրավվածության աճ,

5/ ներգրավված միջազգային դրամաշնորհների և ծրագրերի թիվ,

6/ անգլերենով իրականացվող կրթական ծրագրերի քանակ:

V. ԳՊՀ միջազգայնացման ռազմավարական ծրագրի պատասխանատուները

15.ԳՊՀ միջազգայնացման ռազմավարական ծրագիրն ընդունում և դրանում փոփոխություններ ու լրացումներ կատարում է Համալսարանի գիտական խորհուրդը:

16.Ծրագրի իրականացման պատասխանատուներն են.

1/ ԳՊՀ ռեկտորատը,

2/ ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժինը,

3/ ԳՊՀ ակադեմիական քաղաքականության բաժինը,

4/ ԳՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման բաժինը,

5/ ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինը,

6/ ԳՊՀ ֆակուլտետները,

7/ ԳՊՀ օտար լեզվի և գրականության ամբիոնը

8/ Համալսարանի մյուս ամբիոններն ու կառուցվածքային ստորաբաժանումները:

17. Համալսարանի արտաքին կապերի և լրատվության բաժինը մշակում է ԳՊՀ միջազգայնացման ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների պլան, որում յուրաքանչյուր խնդրի համար նախատեսվում են համապատասխան գործողություններ, դրանց իրականացման ժամանակացույց, պատասխանատուներ, առկա և պահանջվող ռեսուրսներ, գնահատման արդյունավետության ցուցիչներ:

18.Համալսարանի արտաքին կապերի և լրատվության բաժինը ԳՊՀ միջազգայնացման ռազմավարական ծրագրի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվություն է ներկայացնում ԳՊՀ գիտական խորհրդին:

19.Համալսարանի ռեկտորը ԳՊՀ հոգաբարձուների խորհրդին ներկայացվող տարեկան հաշվետվության մեջ, ինչպես նաև Համալսարանի տարեկան գործունեության հաշվետվության և ինքնավերլուծության հրապարակվող զեկույցում ներկայացնում է Համալսարանի միջազգայնացման ռազմավարական ծրագրի իրականացման հաշվետվությունը:

VI.Եզրափակիչ դրույթ

20. Սույն ռազմավարական ծրագիրն իրականացվում է 2026-2030 թվականների ընթացքում՝ ընդհանուր մշակված և յուրաքանչյուր տարվա համար հստակեցված գործողությունների պլանին համապատասխան: